



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ  
«ՀԻԴՐՈՕԴԵՐԵՎՈՒԹԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ  
ՏՆՕՐԵՆ**

« 12 » \_\_\_\_\_ 07 \_\_\_\_\_ 2021թ.

№ 08/ԼԱ/ - 512

**2021 թվականի հուլիսի 7-11-ին դիտված օդերևութաբանական  
պայմանները ՀՀ-ում**

Հուլիսի 7-8-ին՝ առանձին շրջաններում, 9-10-ին՝ շրջանների զգալի մասում, 11-ին՝ տեղ-տեղ դիտվել է անձրև և ամպրոպ:

Տեղումների առավելագույն գումարային քանակը կազմել է. Ստեփանավանում՝ 31,8մմ, Աշոցքում՝ 30մմ, Պուշկինի լճում՝ 29,3մմ, Ապարանում՝ 28մմ, Սեմյոնովկայում՝ 25մմ, Գյումրիում՝ 25մմ, Իջևանում և Ճամբարակում՝ 22մմ, Տաշիրում և Գավառում՝ 21մմ, մնացած շրջաններում՝ 19մմ:

Օդի օրական միջին ջերմաստիճանը հուլիսի 7-8-ին նորմայից բարձր է եղել միջինը 1-2 աստիճանով, 9-ին, 11-ին եղել է նորմայի սահմաններում՝ դրական և բացասական շեղումներով, 10-ին նորմայից ցածր է եղել 1-3 աստիճանով:

Օդի ամենաբարձր ջերմաստիճանը դիտվել է. Արմավիրում՝ +34°C, Արարատում՝ +34...+36°C, Սյունիքում՝ հովտային շրջաններում՝ +34...+36°C, նախալեռնային շրջաններում՝ +26...+28°C, Վայոց Ձորի նախալեռնային շրջաններում՝ +36°C, լեռնային շրջաններում՝ +26°C, Արագածոտնում՝ նախալեռնային շրջաններում՝ +28...+32°C, լեռնային շրջաններում՝ +23...+24°C, Տավուշում՝ +28...+32°C, Շիրակում՝ +24...+28°C (Գյումրի՝ 30°C), Կոտայքում՝ լեռնային շրջաններում՝ +27...+28°C, նախալեռնային շրջաններում՝ +32°C, Լոռիում՝ +25...+27°C, Գեղարքունիքում՝ +23...+26°C (Սեմյոնովկայում՝ 18°C), Երևան քաղաքում՝ +34...+36°C:

Օդի ամենացածր ջերմաստիճանը դիտվել է. Արագածոտնում՝ լեռնային շրջաններում՝ +6...+11°C, նախալեռնային շրջաններում՝ +14...+16°C, Շիրակում՝ +6...+11°C, Լոռիում՝ +9...+14°C (Տաշիրում՝ +7°C), Վայոց Ձորում՝ լեռնային շրջաններում՝ +9°C, նախալեռնային շրջաններում՝ +19°C, Կոտայքում՝ լեռնային շրջաններում՝ +10...+11°C, նախալեռնային շրջաններում՝ +15°C, Գեղարքունիքում՝ +8...+11°C, Սյունիքում՝ հովտային շրջաններում՝ +15...+20°C, նախալեռնային շրջաններում՝ +9...+11°C, Արմավիրում՝ +12°C, Տավուշում՝ +16...+18°C (Դիլիջանում՝ +11°C), Արարատում՝ +16...+18°C, Երևան քաղաքում՝ +16...+17°C:

Հուլիսի 7-ին Աշտարակում դիտվել է քամի 12մ/վրկ, պողոթյունների ժամանակ մինչև 23մ/վրկ արագությամբ, շաբաթվա ընթացքում առանձին շրջաններում՝ 8-18մ/վրկ, պողոթյունների ժամանակ՝ մինչև 16-22մ/վրկ արագությամբ:

Հուլիսի 7-ին Իջևանում դիտվել է կարկուտ ծմմ տրամագծով:

Հուլիսի 9-ին՝ Ապարանում և Արագած ք/լ կայանում դիտվել է անձրև՝ համապատասխանաբար 21մմ և 20մմ քանակությամբ:

Շաբաթվա ընթացքում բարձր ջերմային ֆոնը պահպանվել է, սակայն ժամանակ առ ժամանակ դիտված տեղումները փոքր-ինչ բարձրացրել են հողի խոնավությունը:

Լեռնային շրջաններում աշնանացան ցորենը շարունակել է գտնվել կաթնային և մոմային հասունացման փուլերում, Գյումրիում կատարվել է բերքահավաք՝ սիլոսի (անասնակեր) համար: Սկսվել է կաղամբի գլխի ձևավորումը, շարունակվել է կարտոֆիլի ծաղկումը, տեղ-տեղ ծաղկումն ավարտվել է:

Նախալեռնային շրջաններում սկսվել է աշնանացան ցորենի հասունացումը, Եղվարդում կատարվել է ցորենի և ծիրանի բերքահավաք:

Հովտային շրջաններում կատարվել է բերքահավաքի, դաշտերում և այգիներում ոռոգման աշխատանքներ:

Շաբաթվա ընթացքում հանրապետության գետերում ջրի ելքերի բնական էական փոփոխություններ չեն դիտվել, հուլիսի 8-ին առանձին գետերում դիտվել է ջրի ելքերի որոշ մեծացում, իսկ հուլիսի 9-11-ին՝ դիտվել է փոփոխական ռեժիմ:

Սևանա լճի մակարդակը շաբաթվա ընթացքում իջել է 2 սմ-ով (04.07-11.07.2021թթ. տարբերությունը) և կազմել՝ 1900.76մ (11.07.21թ.), որն անցյալ տարվա նույն օրվա մակարդակից ցածր է 4 սմ-ով:

Հարգանքով՝

Տնօրենի պարտականությունները կատարող



Վ. Գրիգորյան